66 Եւ իբրեւ լուաւ[1] զթիւ համարոյ[2] բազմութեանն[3], առաւել եւս[4] փութա-
ցաւ ուսանել[5]՝ թէ[6] քանի՛ք[7] իցեն պարագլուխք[8] քաջ նախատակացն, զի ե-
րիս ընդ միոյ պատրաստեսցէ[9] առ մի մի ի նոցանէ, թող զայլն[10] ամենայն[11]:
67 Այլ[12] եւ դրաւշից[13] անգամ[14] իւրաքանչիւրոց[15] տեղեկանայր ի նմանէ[16].
եւ[17] [18]թէ քանի՛ գունդ զզաւրսն[19] բաժանիցեն[20], եւ ո՛ր ոք[21] ի նոցանէ սա-
ղարք[22] լինիցին[23], եւ ո՛ր զաւրագլուխ[24] յորմէ կողմանէ յռազմ[25] մտանիցէ, եւ
զինչ անուանք իւրաքանչիւր [26]համհարզացն իցեն, եւ[27] քանի՛ փողահարք ի
մէջ գնդին ձայնիցեն[28]: 68 Ղակի՞շ[29] գործիցեն արդեւք, եթէ արձակ բանա-
կեսցին[30]. ճակատ առ ճակա՞տ գործիցեն[31], եթէ համագունդ [32]ընդ մի տեղի
դրդիցեն: 69 Ո՛ ոք ի նոցանէ երկբայս կայցէ[33], եւ կամ ո՛ ոք ի նոցանէ[1] զանձն
ի մահ դնելով [2]գուն գործիցէ :

---

1 *ԲՏ*$^{2}$ ստուգեաց *փխ* լուաւ *ԳԴԵԸԼԽԿՅՏ*$^{1}$ ուսաւ *փխ* լուաւ
2 *Գ* համարոց
3 *ԾՏ*$^{1}$ զանթիւ *(!)* *Ե* բազմութեան
4 *Բ* *չիք* եւս
5 *Է* առնուլ *փխ* ուսանել *Թ* ուսանիլ
6 *ԲԳԴԿ* եթէ
7 *ԲԼ* քանի
8 *Բ* պարագլուխ
9 *Է* պատրաստիցէ
10 *ԱՁԹVՏ*$^{3}$ զայլ *փխ* զայլն *Գ* *չիք* զայլն
11 *Գ* զամենայն
12 *Բ* *չիք* այլ
13 *ԳԿ* դրօշուց *Դ* զդրօշուց
14 *ԲԴ* *չիք* անգամ
15 *ԲԳԴԵԸԺԼԽԿՅՏ*$^{1}$*Տ*$^{2}$ իւրաքանչիւր *Է* իւրաքանչիւրոյ
16 *Բ* ի նոցանէ *փխ* ի նմանէ
17 *Բ* *չիք* եւ
18 *ԴԺ* գունդք զօրք բաժանիցին *Բ* եթէ ի քանի գունդ զօրքն բաժանեսցին եւ ո՛ ոք
19 *ԳԿ* զօրքն *ԵԸԾՅ* զօրք
20 *ԳԿ* բաժանիցին *ԸՅ* բաժանեցին *Տ*$^{2}$ բաժանեսցին
21 *ԴԵԸԺԼԽՅՏ*$^{2}$ եւ ո՛ ոք
22 *ԵԸԺԽՅ* սաղաւարք (*յուսանցքում*՝ զօրագլուխ) *Ծ* սաղաւարք *Տ*$^{1}$ սաղաւարտօք *(!)*
23 *ՁԷ* լինիցի
24 *Բ* զօրագլուխք
25 *Բ* յռազմ ոք *Թ* ռազմ *Տ*$^{1}$*Տ*$^{2}$ ի ռազմ
26 *ԻԾՏ*$^{1}$*Տ*$^{2}$ համհազարացն *V* համհազար անցանիցեն *(!)* *Տ*$^{3}$ համհարզ անցանիցեն
27 *Դ* եւ կամ (քանի)
28 *Է* ձայնեն
29 *ԵԸԺԽՅ* լակիշ (*յուսանցքում*՝ համագունդ) *Ի* լակիշ *Թ* զակիշ (*յուսանցքում*՝ համագունդ կամ միաժո-
ղով)
30 *ԱՁԷԹԻVՏ*$^{3}$ բանակեսցին *ԲԴԵԸԺԼԽՅՏ*$^{1}$*Տ*$^{2}$ թէ արձակ բանակիցեն *ԳԿ* բանակիցին
31 *Տ*$^{2}$ *չիք* գործիցեն
32 *Բ* ընդ միմեանս դրդեսցեն *ԳՏ*$^{2}$ միմեանս *փխ* մի տեղի *Տ*$^{2}$ դրդեսցեն
33 *ԲԳԴԿ* գայցէ *փխ* կայցէ